

Քիւ 25126
Փետրուար 14, 1977

Արժանաշնորհ
Տ. Արսէն ԲՆՅ. Պարսամեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Ռիչմընտ.

Սիրելի Տէր Արսէն,

Սաացած ենք Փետր. 2, 1977 թուակիր ձեր աեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 28ին զուարուած հա-
մայնքիդ ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի հինգ
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով ըուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վեւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ծիական ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերաց-
նենք ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած
ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան զրկել ծիական Խորհուրդի նորըն-
տիր Դիւանի անդամոց անունները:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ
ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան ա-
րի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸԵՊԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Փիթ Կրին
Ճօզէֆ Լարովսքի
Ճան Աշմեան
Տիգրան Ամիրխանեան
Մովսէս Թաշմեան